

**ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԲՈՒՅՍԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ԱՅԴ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՁԵՎԱԹՂԹԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

----- 2023 թվականի N ----- -Ն

**ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԲՈՒՅՍԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ԱՅԴ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՁԵՎԱԹՂԹԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Սերմերի և տնկանյութի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել՝

- 1) սերմերի հավաստագրման կարգը և այդ նպատակով օգտագործվող ձևաթղթերը՝ համաձայն N 1 հավելվածի,
- 2) տնկանյութի հավաստագրման ժամկետը, կարգը և այդ նպատակով օգտագործվող ձևաթղթերը՝ համաձայն N 2 հավելվածի,
- 3) Հայաստանի Հանրապետությունում պարտադիր հավաստագրման ենթակա բույսերի տեսակների ցանկը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Խաղողը, ծիրանենին, ազնվամորենին պարտադիր հավաստագրման ենթակա են 2023 թվականի հոկտեմբերի 5-ից, հնդավորները, կորիզավորները, հատապտղատուները՝ 2024 թվականի փետրվար ամսից, ընկուզավորները, չոր մերձարևադարձայինները՝ 2024 թվականի սեպտեմբեր ամսից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հոկտեմբերի 5-ից:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ՝

Ն. Փաշինյան